

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-401-02.12.2019-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է սկզբունքային փոփոխություններ կատարել երաշխավորության ինստիտուտում՝ մասնավորապես իմպերատիվ կերպով սահմանելով, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորը պետք է կրի սուբսիդիար պատասխանատվություն՝ բացառությամբ խիստ սահմանափակ դեպքերի: Միաժամանակ սպառիչ ցանկով սահմանվում են, թե որ պայմաններն սպառելուց հետո միայն կարելի է պահանջ ներկայացնել երաշխավորի դեմ:

Ըստ նախագծի հիմնավորման՝ նման համակարգային փոփոխությունների նպատակը հատկապես մարզերում, գյուղական համայնքներում երաշխավորի՝ իր կողմից երաշխավորության պայմանագրով ստանձնած պարտավորությունների հիման վրա հետագայում առաջացող անբարենպաստ իրավական հետևանքների չիմացության կամ թերի պատկերացման հնարավոր կանխումն է:

Այդ կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի սկզբունքներին և քաղաքացիական իրավունքի ընդհանուր տրամաբանությանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների **հավասարության, կամքի ինքնավարության** և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, **պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության**, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման: Քաղաքացիական իրավունքները կարող են

սահմանափակվել միայն օրենքով, **եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը մի շարք գործերով կարևորել են վերոգրյալ սկզբունքների՝ մասնավորապես պայմանագրի ազատության սկզբունքի առանցքային դերը քաղաքացիական հարաբերություններում (*Կե՛ս, օրինակ, թիվ ԱԲԴ/0303/02/15, ԵԱԲԴ/5358/02/14, ԵԿԴ/2680/02/15, ԵԿԴ/1489/02/13, ԵԿԴ/1791/02/11 գործերով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-1418 որոշումը*):

Թիվ ԼԴ/0175/02/11 գործով որոշմամբ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ քաղաքացիական օրենսդրության ցանկացած սկզբունքից բացառություն նախատեսվելու կամ բացառություն նախատեսող օրենսդրության մեկնաբանության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, որի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, *եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:*

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ պայմանագրի ազատության սկզբունքից բացառությունը՝

1. պետք է նախատեսված լինի օրենքով,

2. անհրաժեշտ լինի պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

Կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքները ոչ միայն որպես քաղաքացիական իրավունքի էությունը մատնանշող առանցքային սկզբունքներ են, այլ նաև քաղաքացիական շրջանառության մասնակիցների համար իրավունք են: Հետևաբար, անգամ եթե կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության և մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության

սկզբունքների վրա հիմնված իրավունքները սահմանափակվում են, ապա բավարար չէ, որպեսզի այդ սահմանափակումը սահմանվի օրենքով, այլ նաև նշված սահմանափակումը *պետք է անհրաժեշտ լինի պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:*

Ընդ որում, կարևորելով մյուս կարևոր սկզբունքը՝ քաղաքացիական հարաբերության մասնակիցների հավասարությունը՝ հարկ է նշել, որ պայմանագրի մի կողմի իրավունքը չի կարող գերադասվել մյուսի իրավունքից և դիտարկվել որպես «պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար» անհրաժեշտություն: Հետևաբար անհրաժեշտ է լրացուցիչ հիմնավորել, թե նման կարգավորումն ինչպես կարող է դիտարկվել որպես «պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար» անհրաժեշտություն, մինչդեռ այս մասով նախագծի հիմնավորումները խիստ թերի են, քանի որ ըստ էության հիմնական հիմնավորումը պայմանագրի մի կողմի ցածր իրավագիտակցության մակարդակն է¹:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Անձի նկատմամբ տարբերակված, խտրական վերաբերմունքի առնչությամբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել

¹ Հարկ է նշել, որ եթե երաշխավորության պայմանագիրը կնքված լինի էական մոլորության, խաբեության ազդեցության տակ կամ կամքի այլ արատով, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ և 313-րդ հոդվածների հիմքով այն կարող է անվավեր ճանաչվել:

այնպիսի պայմաններ, որոնք *նույն կարգավիճակն ունեցող* անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները (ՄԴՈ-731),

- Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, *որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից* (ՄԴՈ-881),

- խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ (ՄԴՈ-1224):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ խտրականության արգելքի խնդիր առաջանալու համար պետք է լինի տարբերություն՝ համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի միջև: Նմանատիպ իրավական դիրքորոշումներ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտնել է, մասնավորապես՝ *Stec and Others v. the United Kingdom* [GC], nos. 65731/01 and 65900/01, § 51, ECHR 2006-VI և *Carson and Others v. the United Kingdom* [GC], no. 42184/05, ECHR 2010:

Նախագծով առաջարկվող կարգավորման դեպքում ստացվում է, որ քաղաքացիական շրջանառությունում նույնանման կարգավիճակ ունեցող երկու սուբյեկտներից (պարտատեր և երաշխավոր) մեկը՝ երաշխավորը, հայտնվում է ավելի արտոնյալ պայմաններում՝ *առանց համապատասխան օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի*: Մինչդեռ գործող կարգավորումը հնարավորություն է տալիս, պայմանագրի ազատության սկզբունքից ելնելով, որոշել, թե կոնկրետ տվյալ պայմանագրի դեպքում կողմերի համար առավել նախընտրելի է համապարտությունը, թե սուբսիդիարությունը:

Ընդ որում, նախագծի հիմնավորումներից պարզ է դառնում, որ նախագիծն ըստ էության ուղղված է միայն որոշակի շրջանակի անձանց՝ վարկային բեռի տակ գտնվող գյուղացիների իրավունքների ենթադրյալ պաշտպանությանը՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ երաշխավորություն կարող է կնքվել ոչ միայն վարկային պայմանագրերի, այլ նաև ցանկացած այլ պայմանագրի կատարման ապահովման նպատակով: Օրինակ, երկու ֆիզիկական անձ կարող են կնքել ավտոմեքենայի՝ տարածամկետ վճարման պայմանով առուվաճառքի պայմանագիր՝ նշված պայմանագրից բխող պարտավորությունների կատարումն ապահովելով այլ անձի երաշխավորությամբ: Գործող կարգավորումը ճկունություն է տալիս պայմանագրի բոլոր կողմերի համար առավել ձեռնառու պայմաններով պայմանագրի կնքման համար, մինչդեռ եթե նախագիծը ընդունվի, ստացվելու է, որ գնորդն ու երաշխավորն առավել բարենպաստ պայմաններում են, քան վաճառողը: Ընդ որում, նման դեպքում հենց գնորդը կարող է ավելի անբարենպաստ իրավիճակում հայտնվել, քանի որ վաճառողը կարող է այլևս չհամաձայնվել տարածամկետ վճարման պայմանին կամ ապրանքի գինը սահմանել ավելի բարձր:

Նույն իրավիճակն է գործելու նաև վարկային պայմանագրերի դեպքում: Բանկերը, վարկային կազմակերպություններն ստիպված են լինելու փաստորեն մի ամբողջ դատական գործընթաց սպառել (ներառյալ կատարողական վարույթը կամ սնանկության վարույթը), որը, որպես կանոն, տևում է մի քանի տարի, որից հետո միայն իրավունք ունենան հայց ներկայացնել երաշխավորի դեմ: Մինչդեռ գործող կարգավորման համաձայն՝ սուբսիդիար պատասխանատվության դեպքում պարտատերը նախ պետք է պահանջ ներկայացնի հիմնական պարտապանին, և եթե հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը, ապա այդ պահանջը կարող է ներկայացվել սուբսիդիար պատասխանատվություն կրող անձին:

Հետևաբար, նախագիծը խնդրահարույց է ոչ միայն այն առումով, որ ինպերատիվ կերպով սահմանում է սուբսիդիար պատասխանատվության պահանջ, այլ նաև նրանով, որ սպառիչ ցանկով սահմանում է այն սահմանափակ դեպքերը, երբ թույլատրվում է պահանջ ներկայացնել երաշխավորին:

Առաջարկվող կարգավորման դեպքում ոչ միայն պարտատերերն են կրելու լրացուցիչ բեռ, այլ նաև խիստ ծանրաբեռնվելու են դատարանները, քանի որ նույն պայմանագրից բխող վեճի շրջանակներում քննվելու են մեկից ավելի դատական գործեր:

Մինչդեռ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երաշխավորը և պարտապանը պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն, ***եթե երաշխավորի սուբսիդիար պարասխանատվությունն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով:***

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, ***եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով,*** իսկ 3-րդ մասի համաձայն՝ համատեղ երաշխավորություն ստանձնած անձինք պարտատիրոջ առջև պատասխանատվություն են կրում համապարտ, ***եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:***

Գործող կարգավորումը հնարավորություն է տալիս ճկունություն ապահովել պայմանագրային հարաբերություններում: Թեև գործնականում վարկային հարաբերություններում ֆինանսական կազմակերպությունները հիմնականում առավել մեծ դերակատարում ունեն պայմանագրի պայմանները որոշելու հարցում, սակայն նախագծի ընդունման պայմաններում գործնականում առկա խնդիրները չեն լուծվելու: Բանն այն է, որ ֆինանսական կազմակերպություններն իրենց ռիսկերը գնահատելիս հաշվի են առնում նաև վարկի գումարի հետ ստացված հավանականությունը, արագությունը, ապահովվածությունը և այլն: Հետևաբար, եթե ի սկզբանե ինպերատիվ կերպով սահմանափակվի երաշխավորի համապարտ պատասխանատվության հնարավորությունը, ապա ֆինանսական կազմակերպությունները կա՛մ կօգտվեն համավարկառուի ինստիտուտից, կա՛մ պարզապես կսկսեն վարկեր տրամադրել սահմանափակ թվով անձանց, կա՛մ կպահանջեն ապահովման այլ միջոցներ (օրինակ՝ գրավ): Արդյունքում ոչ միայն նախագծի հիմնավորման մեջ նշված նպատակները գործնականում չեն իրագործվի, այլ նաև նույն գյուղացիները կհայտնվեն առավել անբարենպաստ դրության մեջ, քանի որ գրեթե չեն կարողանա ստանալ վարկեր, առավել ևս՝ «էժան վարկեր»՝ նկատի ունենալով, որ ֆինանսական կազմակերպություններն այլ ֆինանսական գործիքներով են փորձելու ապահովագրել իրենց ռիսկը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրահանգել, որ նախագծով, ըստ էության, փորձ է կատարվում բնակչության ցածր իրավագիտակցությամբ պայմանավորված ռիսկերը զսպել օրենսդրական փոփոխությունների միջոցով: Մինչդեռ նման հարցի լուծում չի կարող լինել օրենսդրական այնպիսի փոփոխություն կատարելը, որը կասկածի տակ է դնում քաղաքացիական օրենսդրության մասնավոր բնույթը, ինչպես նաև ավելի մեծ վտանգ են ներկայացնում նախագծի «շահառու» հանդիսացող անձանց համար:

Հետևաբար, նախագծի հիմնավորման մեջ նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է վերանայել առաջարկվող մոտեցումը, դիտարկել այլ հնարավոր տարբերակներ (թեկուզև այլ օրենսդրական լուծումներ), որոնք կապահովեն նախագծի նպատակների իրականացումը: Ուստի կարծում ենք, որ նախագիծը նշված տարբերակով ընդունվել չի կարող. անհրաժեշտ են լրացուցիչ հետազոտություններ, քննարկումներ, որպեսզի նախագծով որդեգրված նպատակը գործնականում չուղղվի հենց նախագծի «շահառուների» դեմ:

Տեսական աղբյուրները նույնպես փաստում են երաշխավորի համապարտ պատասխանատվության կանխավարկածի և երաշխավորի պատասխանատվության հարցում պայմանագրի ազատության սկզբունքի գոյության մասին²:

Ինչ վերաբերում է գործնականում երաշխավորների իրավագիտակցության բարձրացման հարցին, ապա հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2017 թվականին ընդունել է «Երաշխավորների հետ գործարար վարվելակերպի կանոններ» կանոնակարգ 8/06-ը հաստատելու մասին» թիվ 176-Ն որոշումը, որով լուծվել են նաև երաշխավորների իրավագիտակցության բարձրացման հետ կապված հարցերը: Նշված որոշմամբ սահմանվում է երաշխավորների հետ բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից գործարար վարվելակերպի կանոնների կիրառման եղանակների և ընթացակարգերի պահանջները: Մասնավորապես, սահմանվում է, որ կազմակերպությունը պետք է երաշխավորության և երաշխավորությամբ ապահովված պարտավորության վերաբերյալ այլ պայմանագիր (վարկային կամ այլ պրոդուկտի վերաբերյալ պայմանագիր) կնքելուց առաջ երաշխավորին ծանոթացնի

² Տե՛ս, օրինակ, **Տ. Կ. Բարսեղյան** «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», 1-ին մաս, 3-րդ հրատարակություն, խմբագրությամբ՝ պրոֆ. **Գ. Հ. Նարախանյանի**, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2006, **Суханов Е. А** «Гражданское право: в 4 т. том 3: обязательственное право: учеб. для студентов вузов», 3-е изд., перераб. и доп., М.: Волтерс Клувер, 2005, **Брагинский М. И., Витрянский В. В.** «Договорное право. Книга первая: общие положения», изд-во 4-е, стереотипное, М., «Статут», 2001:

երաշխավորության և երաշխավորությամբ ապահովված պարտավորության պայմանագրերի էական պայմաններին, վարկառուի (համավարկառուի, պարտապանի) կողմից իր պարտականությունը չկատարելու դեպքում երաշխավորի վարկային պատմության վատթարացման, երաշխավորի պարտավորության, դրա չափի, երաշխավորի վերաբերյալ վարկային ռեգիստր և վարկային բյուրո տեղեկատվության տրամադրման և վեճերի լուծման մեխանիզմների վերաբերյալ:

Բացի այդ, օրինակ, Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը պատրաստել է տարբեր սոցիալական գովազդներ³, այդ թվում՝ երաշխավորության⁴ վերաբերյալ:

Վերոգրյալն ամփոփելով՝ հարկ ենք համարում նշել, որ միայն երաշխավորների իրավագիտակցության բարձրացման նպատակով անթույլատրելի է խաթարել քաղաքացիական իրավունքի էությունը: Եթե առկա միջոցները բավարար չեն երաշխավորների իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ (թեև այդ կապակցությամբ լուրջ հիմնավորումներ, վիճակագրական տվյալներ նախագծին կից ներկայացված չեն), ապա անհրաժեշտ է քննարկել լրացուցիչ գործնական քայլեր ձեռնարկելու հարցը: Օրինակ՝ պատրաստել ավելի շատ և ավելի խորը սոցիալական գովազդներ, մարզերում կրթական բնույթի միջոցառումներ իրականացնել, հանրային հեռուստառադիոընկերությունների միջոցով տարածել տեղեկատվություն երաշխավորության ինստիտուտի վերաբերյալ, առավել խիստ վերահսկել բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից երաշխավորների հետ գործարար վարվելակերպի կանոնները պահպանելու հանգամանքը և այլն: Իսկ եթե կարիք կա վերահսկել ֆինանսական կազմակերպություններին, ապա դա անհրաժեշտ է իրականացնել այնպիսի օրենսդրական փոփոխություններով, որոնք կասկածի տակ չեն դնի ամբողջ պայմանագրային իրավունքի էությունը՝ ազդելով նաև այլ պայմանագրերի վրա, ինչպես նաև ուղղակիորեն չեն ուղղվի հենց այն անձանց դեմ, որոնց շահերի պաշտպանությանն է ուղղված նախագիծը:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ վերոգրյալ խնդիրները բացառում են նախագծի ընդունման հնարավորությունը ներկա տարբերակով, ուստի՝ գտնում ենք, որ նախագծի առանձին դրույթներին անդրադառնալու անհրաժեշտություն առկա չէ, թեև նախագծի առանձին դրույթներ, բացի վերոգրյալ խնդիրներից, ունեն նաև այլ խնդիրներ

³ https://www.youtube.com/watch?v=_wwlY0x2Xgo&list=PL3aHldDvrSxH2QBmIBJbNu-m3EbSpOb3I

⁴ <https://www.youtube.com/watch?v=zKTYzldTGF8&list=PL3aHldDvrSxH2QBmIBJbNu-m3EbSpOb3I&index=10>

(օրինակ՝ նախագծով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացվող 382.1 հոդվածը խաթարում է քաղաքացիական իրավունքում ընդհանուր իրավահաջորդության էությունը):

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը առաջարկում է ձեռնպահ մնալ ներկայացված տարբերակով նախագծի ընդունումից, քանի որ նշված տարբերակով նախագիծը խաթարում է քաղաքացիական իրավունքի էությունը, խնդրահարույց է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության առումով և գործնականում չի լուծելու նախագծի հիմնավորման մեջ բարձրացված խնդիրները: